

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆԻ ՈՒ ՊԱՐՍԿԵՐԵՆԻ
ԱՆՎԱՆԱԿԱՆ ՀԱՐԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԸՆԴՀԱՆՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սույն հոդվածում ըստ համեմատության մեթոդի, համաժամանակյա մոտեցումով և ելնելով բառերի բառակազմական վերլուծությունից, նպատակ է դրվել բացահայտելու արդի հայերենի ու պարսկերենի վերլուծական անվանական հարադրությունների բառային իմաստի և ձևաբանական կառուցվածքի հատկանիշները, Անվանական հարադրական կազմությունները կազմվում են գոյական, ածական, մակբայ, թվական, շաղկապ, եղանակավորող (վերաբերական) բառ խոսքի մասերի բառերի հարադրությամբ¹, որոնք, բաղադրիչների միասնությամբ, արտահայտում են նաև իմաստների միասնություն՝ մեկ միավորի արժեքով, ինչպես՝ հայերեն օր ու գիշեր, ուտից գլուխ, կարգինսարքին, պարսկերեն شب و روز (*šah o rûz*) /օր ու գիշեր/, گول و گداز (*gol o giâh*) /բառացի՝ ծաղիկ ու բույս=բույսերի տարատեսակներ/, آبل و تبار (*âl o tahâr*) /տոհմ, ծագում/և այլն: Տարբեր լեզուներում, այդ թվում՝ հայերենում ու պարսկերենում, անվանական հարադրությունների առաջացման միջոցներից պետք է համարել հարադրավոր կրկնությունների կազմումը: «Կրկնավոր զուգորդությունների առաջացումը լեզուներում, այդ թվում թե հայերենում և թե պարսկերենում պարարտ հող նախապատրաստեց հարադրավոր զուգորդությունների գոյացման համար»²:

1) Հայերենում անվանական հարադրությունները, բաղադրիչների միացման եղանակի համաձայն, լինում են շաղկապական, հարակցական և կապակցական³, որոնք Ս. Աբեղյանն ընդհանուր անունով կոչում է բաղիյուսական հարադրություններ⁴: Պարսկերենում անվանական հարադրությունները կարելի է բաժանել շաղկապական, շարահարական՝ առանց նշույթի, և հավելադրական ենթատեսակների: ա) Հայերենում շաղկապական անվանականների բաղադրիչները հարադրվում են ու (և) շաղկապի միջոցով, ինչպես՝ սար ու ծոր, օր ու գիշեր, դաշտ ու անտառ և այլն:

¹ Տե՛ս Ս. Ս. Սուքիասյան, Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1982, էջ 293 և հաջ.:

² Տե՛ս Գ. Մելիքյան, Կրկնավոր և հարադրավոր բարդությունների և զուգորդությունների պարսկերեն-հայերեն բառարան, Եր., 2008, էջ 16:

³ Տե՛ս Էդ. Սրայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Եր., էջ 228:

⁴ Տե՛ս Ս. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Եր., 1965, էջ 175 և հաջ.:

Շաղկապներով հարադրվող անվանական կազմությունները հանդիպում են նաև պարսկերենում, որոնց բաղադրիչները միանում են իրար և (va, o) /և, ու/ շաղկապներով, ինչպես՝ شب و روز (*šab o rûz*) /օր ու գիշեր/, کارد و خون (*kârd o xûn*) /բառացի՝ դանակ ու արյուն=խիստ թշնամություն/, اراذل و اوباش (*arâzel va oybâš*) /տականքներ/ և այլն: Ավելացնենք, որ սովորաբար միավանկ կամ երկուսից ոչ ավելի վանկից կազմված բառերը հարադրվում են ' (o) շաղկապով, իսկ երկուսից ավելի վանկ ունեցող բառերը՝ և (va) շաղկապով: «Նշելի է, որ պարսկերենի և (o, va) շաղկապի o տարբերակը հարաբերակից է հայերենի ու միավորական շաղկապին, va տարբերակը՝ ավելի շուտ՝ և-ին, քան ու-ին»⁵:

բ) Հայերենին հատուկ մի առանձին խումբ են կազմում հարակցական հարադրությունները, որոնց բաղադրիչները միանում են իրար ուղղակի հարակցությամբ (գրվում են միացման գծիկով), ինչպես՝ *ամառ-ձմեռ, քահել-քիվան, աշակերտ-աշակերտուհի* և այլն: Այս կարգին պատկանող հարադրություններն էլ հայերենում շատ գործում են:

Պարսկերենում, որտեղ գծիկով գրվող բարդություններ չկան, ձևակազմության երկրորդ տեսակն են ներկայացնում շարահարական հարադրությունները:

Երբեմն որոշ պարսիկ հեղինակների երկերում հանդիպում են նաև գծիկով գրված անվանական հարադրություններ, ինչպես՝ دالتي-اسلاوی (*bâlti-slâvi*) /բալթյան-սլավոնական/, سیاسی-اجتماعی (*siyâsi-ejtemâi*) /քաղաքական-հասարակակ/, عقیدتی-سیاسی (*aqidati-siyâsi*) /գաղափարական-քաղաքական/ և այլն: Կան քերականագետներ, ըստ որոնց՝ գծիկով գրվող բարդություններ պարսկերենում նախկինում չեն եղել: Հակառակ այս կածիքի, սակայն, Ղոլամ Ռեզա Թաֆլիդին գտնում է, որ մի քիչ ուշադրություն դարձնելիս պարզվում է, որ պարսկերենում այսպիսի բարդությունների շատ մոտիվներ կան: Նա գտնում է, որ որոշ բարդություններ, ընդ որում՝ անվանական հարադրություններ նախապես եղել են գծիկով գրվող կապակցություններ, ինչպես՝ کسه کوزه (*kâse kūze*) /բառացի՝ գավաթ կուժ=մանր-մունր առարկաներ/, قلم دوات (*qalam davât*) /գրիչ թանաք/, سیاه سفید (*siâh sefid*) /սև ու սպիտակ/ և այլն: Ըստ նրա՝ գծիկով բարդություններ կազմելու եղանակը թեպետ պարսկերենում հազվադեպ է հանդիպում, բայց այսուհետ կարող է ծառայել իբրև բառակազմության միջոց⁶: Հեղինակի այս դիտարկումը վերաբերվում է բառակազմության ուղղագրական ձևերին:

⁵ Տե՛ս Գ. Մելիքյան. նշվ. աշխ., էջ 20:

⁶ Տե՛ս *Gholām-Rezâ Tajvidi. English Morphology Plus Word-formation Processes in English & Persian. Teh., 2005, pp. 32-33:*

Պարսկերենի անվանական շարահարական կազմությունների բաղադրիչները պարզապես միանում են իրար և գրվում են անջատ՝ ոչ մի կետադրական նշանով, ինչպես՝ *خورد برد* (*xorde borde*) /բառացի՝ կերած տարած=պարտական լինել/, *پشت رو* (*pošt rû*) /թարս ու շիտակ/, *دافتر دستک* (*dafīar dastak*) /թոթարարական գործեր/ և այլն: Հայերենում էլ առաջին բաղադրիչի բացառական հոլովով կազմված բարդությունների և կոտորակային թվականական հարադրությունների բաղադրիչները միանում են իրար շարահարական եղանակով. սակայն դրանք մտնում են հայերենի անվանական հարադրությունների երրորդ տեսակի՝ կապակցական հարադրությունների մեջ, ինչպես՝ *երկուսից երեք, ոտքից գլուխ, երեք քառորդ* և այլն⁷:

Հայերենում և պարսկերենում կան միևնույն բառերից կազմված անվանական հարադրություններ, որոնք կարող են ունենալ ձևակազմական տարբերություններ. մի դեպքում հանդես են գալիս շաղկապով, իսկ մյուս դեպքում՝ առանց շաղկապի (հայերենում՝ միացման գծիկով գրվող հարակցական հարադրություններ, պարսկերենում՝ անջատ գրվող բաղադրիչներով շարահարական հարադրություններ), ինչպես՝ *գիշեր ու ցերեկ > գիշեր-ցերեկ, ծայն ու ծպտուն > ծայն-ծպտուն*, *بالا و پایین* (*bālā o pāin*) // *بالا پایین* (*bālā pāin*) /վերև-ներքև/, *حاضر و غایب* (*hāzer o gāyeb*) // *حاضر غایب* (*hāzer gāyeb*) /ներկա-բացակա/ և այլն: Ընդ որում պարսկերենում, ի տարբերություն կրկնությունների, անվանական հարադրություններում ոչ միայն բառակազմության շարահարական եղանակն այնքան էլ գործուն չէ, այլև, կարելի է ասել, շարահարական անվանական համարյա բոլոր հարադրությունները պարսկերենում ունեն նաև շաղկապական տարբերակը:

գ) Հայերենին հատուկ մի առանձին խումբ են կազմում կապակցական հարադրությունները, որոնք ներկայացնում են բառերի շարահյուսական կապակցություն՝ բաղադրիչների համապատասխան բերականական ձևավորումով, ինչպես՝ *ոտքից գլուխ, բերով-բարձով, հինգից վեց, շարքով-կարգով* և այլն: Նման կազմությունների պարսկերեն համարժեք ձևեր պետք է համարել հավելարդական հարադրությունները: Թեև իմաստային հարաբերության առումով դրանք համընկնում են հայերենի կապակցական հարադրություններին, սակայն ձևակազմության եղանակի տեսակետից այս կարգի կապակցությունների բաղադրիչները պարսկերենում հոլովների բացակայության պատճառով միանում են իրար հավելարդի բառերի միջոցով:

⁷ Տե՛ս Ղ. Գյուլբեկյան, Հայերեն բառարան-առեղեկատու. միասին, անջատ կամ գծիկով գրվող բառեր, Եր., 2001, էջ 17 և հաջ.:

Հավելադիր բառերը պարսկերենի խոսքի մասերից մեկն են: Դրանք, միշտ անփոփոխ ձևով հանդես գալով, դրվում են անվանական խմբից առաջ (բացի *ra*)-ից, որն ուղիղ խնդիրի նշան, որոշիչ հոդ է և դրվում է անվանական խմբից հետո) և որոշում են նրա դերը⁸: Ամեն դեպքում հավելադիրները պարսկերենի քերականության բարդ խնդիրներից են եղել և ե'ն: Կան բառեր՝ «խսկական հավելադիրներ» անվանումով, որոնք միշտ գործածվում են իբրև հավելադիր, և կան բառեր, որոնք տարբեր կիրառություններում կարող են հանդես գալ կա'մ իբրև հավելադիր, կա'մ էլ իբրև ածական, գոյական և մակբայ⁹:

Հատկանշանական է, որ հավելադիրների մի մասը համարժեք է հայերենի հոլովներին, այլ կերպ ասած՝ պարսկերենում հոլովների բացակայությամբ հավելադիր բառերը որոշում են անունների դերերը: Հավելադիր բառերը պարսկերենում շատ գործածական են նաև տարբեր կարգերի կազմություններ, այդ թվում՝ անվանական հարադրություններ, կազմելու գործում, ինչպես՝ *سر تا پا* (*sar tā pā*) /ոտից գլուխ/, *داه تا بیه* (*dah tā bist*) /տասից քսան/ և այլն:

2) Ըստ հարադրությունների բաղադրիչների խոսքիմասային պատկանելության, երկու լեզուներում անվանական հարադրություններ կազմվում են լիմաստ կամ նյութական իմաստ արտահայտող բոլոր խոսքի մասերից՝ գոյական, ածական, թվական, դերանուն, մակբայ և եղանակավորող բառեր: Բայը ինքնին հասկանալի է, կազմում է բայական հարադրություններ, թեև բայահիմքերից կազմված գոյականներից նույնպես անվանական հարադրություններ կազմվում են:

ա) Գոյականական անվանականները կազմվում են գոյականների միացումով, շաղկապներով կամ առանց շաղկապների: Գոյականները շատ ունակ են հարադրություններ կազմելու հարցում և ներկայացնում են մի զգալի շերտ, ինչպես՝ *որ ու գիշեր, տուն ու տեղ, ծյուն-ձմեռ, վազոն-ռեստորան* և այլն: «Գոյական հարադիրները կարող են լինել ինչպես պարզ, այնպես էլ բաղադրյալ, հանդես գալ ինչպես ուղիղ, այնպես էլ թեք հոլովածներով, կազմել ինչպես սովորական, այնպես էլ դարձվածային կապակցություններ ...»¹⁰:

Ի տարբերություն պարսկերենի համեմատությամբ՝ հայերենին հատուկ են արական և իգական սեռի անձ ցույց տվող նույնահիմք գոյականներով

⁸ Sb'u Dr. Xosro Gholamali-Zāde, *Sāxt-e zabān-e fārsi* Մարսից լեզվի կառուցվածքը, Teh., 1374 (1995), էջ 49-51:

⁹ Sb'u Dr. Mahdi Maškātoddini, *Dastūr-e zabān-e fārsi, vajegān va peyvandhāye sāxti* Մարսից լեզվի քերականություն, բառեր և բառակազմություն, Teh., 1386 (2007), էջ 110-126:

¹⁰ Sb'u Q. P. *Zabān-e fārsi, dastān-e zabān-e fārsi* Մարսից լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, Եր., 1989, էջ 226:

կազմված հարադրությունները, ինչպես՝ *երգիչ-երգչուհի, աշակերտ-աշակերտուհի, ուսուցիչ-ուսուցչուհի* և այլն: Պարսկերենում արական և իգական սեռի քերականական տարբերակիչ ձևությ չկա, և, բնականաբար, նման հարադրություններ չեն կազմվում: Ինչպես հայերենում, այնպես էլ պարսկերենում գոյականների հարադրությամբ կազմվում են կապակցություններ՝ մեկ ընդհանուր իմաստով և լեզվական մեկ միավորի արժեքով, որոնց բաղադրիչ եզրերը հարադրվում են շաղկապներով կամ առանց որևէ նշույթի, ինչպես՝ *خار و خشک* (*xār o xāsāk*) /մացառ, ցախ /, *بر و بیابان* (*barr o biābān*) /անապատ, *جلو کاب* (*çelo kabāb*) /բրինձով փլավի հետ քաբաբ/, *دعرا مرافعه* (*daevā morāfeā*) /վեճ, վիճաբանություն/ և այլն:

Եվ հայերենում, և՛ պարսկերենում բայահիմքային գոյականներից անվանական հարադրություններ են կազմվում, որոնց բաղադրիչները սովորաբար հարադրվում են հայերենում՝ *ու* (*u*), իսկ պարսկերենում՝ *و* (*va /o/*) /ու(*u*)/ շաղկապներով, ինչպես՝ հայերեն *առք ու վաճառք, սարք ու կարգ* և այլն, պարսկերեն *خريد و فروش* (*xarid o forūš*) /առք ու վաճառք/, *رافت و آمد* (*raft o āmad*) /երթևեկություն/, *جنب و جوش* (*jonb o jūš*) /եռուզեմ/ և այլն:

Պարսկերենին հատուկ են այնպիսի բայահիմքային գոյականներից կազմվող հարադրությունները, որոնց առաջին եզրը հանդես է գալիս բայի անցյալի, իսկ երկրորդ եզրը՝ միևնույն բայի ներկայի հիմքով, ինչպես՝ *پخت و پز* (*poxt o paz*) /եփ ու թափ/, *رافت و روب* (*raft o rīb*) /մաքրել/, *ساخت و ساز* (*sāxt o sāz*) /կազմավորում/, *شست و شو* (*šost o šū*) /վազում/ և այլն:

Պարսկերենում մի առանձին խումբ են կազմում այնպիսի կազմություններ, որոնց բաղադրիչները ներկայացնում են հրամայական եղանակի բայածկի եզակի թիվ, սակայն հարադրության մեջ կորցնում են իրենց բայական իմաստը, և որպես կապակցության արդյունք ստացվում են վերլուծական գոյականական անվանական հարադրություններ, ինչպես՝ *بزن بکش* (*bezan bekoš*) /բառացի՝ խփի'ր սպանի'ր=սպանդ, արյունահեղություն/, *بریز بیاش* (*beriz bepāš*) /բառացի՝ թափի'ր ցրի'ր=անիմաստ ծախս, ծռայություն/, *بزن و براقش* (*bezan o beraqs*) /խփի'ր ու պարի'ր=պար ու նվագ/ և այլն: Բառակազմության այս եղանակը բավական գործում է պարսկերենում հարադրություններ կազմելու գործում:

Նկատելի է, որ եթե հայերենում գոյականական համադասական հարադրությունները կարող են հոլովվել կամ երկու մասով (հայր ու մայր, հոր ու մոր, հորից ու մորից և այլն), կամ միայն վերջին բաղադրիչով (շենք ու շնորհք, շենք ու շնորհքով, շենք ու շնորհքից և այլն), ապա պարսկերենում նման տիպի բառակապակցությունները կազմվում են հայերենի հոլովներին համարժեք

հավելադիր բառերով, որոնք դրվում են հարադրության առաջին եզրից առաջ, ինչպես՝ از پدر و مادر (*az pedar o mādar*) /հորից ու մորից/, به پدر و مادر (*be pedar o mādar*) /հորն ու մորը/ և այլն:

բ) Ածականական հարադրությունները կազմվում են ածականների հարադրությամբ, որոնք հանդես են գալիս շաղկապական կամ հարակցական եղանակներով, ինչպես՝ ծանր ու թեթև, լավ ու վատ, լռիկ-մնջիկ, կարմիր-կանաչ և այլն: Պարսկերենում նույնպես ածականներից կազմվում են անվանական հարադրություններ, որոնց բաղադրիչները միանում են իրար շաղկապական կամ շարահարական եղանակներով, ինչպես՝ پیر و کور (*pir o kūr*) /զառամյալ, շատ ծեր/, کم و زیاد (*kam o ziād*) /քիչ թե շատ/, حلال و حرام (*halāl harām*) /արգելված ու թույլադրելի, բարբառային՝ հալալ-հարամ/ և այլն:

գ) Թվականական հարադրությունները կազմվում են թվականների միացումով, որոնք ըստ բաղադրիչների կապակցության եղանակի լինում են հարակցական կամ կապակցական:

Նման նշանակություններ արտահայտող թվականական հարադրություններ պարսկերենում նույնպես կազմվում են:

Ի տարբերություն հայերենի, պարսկերենում մոտավորության իմաստ արտահայտող թվականական հարադրությունները գրվում են անջատ, ինչպես՝ ده بشت (*dah bist*) /տասը-քսան/, ده سه (*do se*) /երկու-երեք/, پنجاه هشت (*panjāh šast*) /հիսուն-վաթսուն/ և այլն: Հայերենում բացառական հոլովով կազմվող թվականական հարադրությունների պարսկերեն համարժեքները կազմվում են تا (*tā*) /մինչև/ հավելադիր բառով, որը դրվում է բաղադրիչների միջև, ինչպես՝ ده تا سه (*do tā se*) /երկուսից երեք/, ده تا بیست (*dah tā bist*) /տասից քսան/, پنجاه تا صد (*panjāh tā sad*) /հիսունից հարյուր/ և այլն: Իսկ կոտորակային թվականական հարադրությունները բառակազմության տեսակետից հայերենում ու պարսկերենում նման եղանակով են կազմվում և գրվում, ինչպես՝ دو سوم (*do sevom*) /երկու երրորդ/, چهار پنجم (*chār panjom*) /չորս հիներորդ/, یک دوم (*yek dovom*) /մեկ երկրորդ/ և այլն:

դ) Սակբայական հարադրությունները կազմվում են մակբայների հարադրությամբ, որոնք եզրերը միանում են իրար շաղկապական կամ հարակցական եղանակներով, ինչպես՝ ետ ու առաջ, վերև-ներքև, այստեղ-այնտեղ և այլն: Մակբայներից կազմվող հարադրություններ հանդիպում են նաև պարսկերենում. դրանց բաղադրիչները միանում են իրար շաղկապական կամ շարահարական եղանակներով, հմմտ. عقب و جلو (*aqab o jelo*) /ետ ու առաջ/, پشت و آرد (*pošt o ri*) /թարս ու շիտակ/, بالا پایین (*bālā pāin*) /վերև-ներքև/ և այլն:

ե) Եվ հայերենում, և՛ պարսկերենում շաղկապներով և եղանակավորող բառերով կազմվում են հարադրություններ, ինչպես՝ *ապա թե ոչ, կամ թե, կարծես թե, ոչ այլ, ոչ թե* , اگر چه (agar çe) /թեև/, گویی (gویی ke) /կարծես որ/, شاید (šâyad ke) /երևի որ/ և այլն:

3) Ըստ բառային իմաստաբանական հատկանիշների, անվանական հարադրությունները կազմվում են այնպիսի բաղադրիչներից, որոնց արտահայտած իմաստները, հասկացությունները ինչ-ինչ կողմերով կա՛մ իրապես են կապված իրար հետ, կա՛մ ունեն վարկածային կապ:

Սեր համեմատած երկու լեզուներում անվանական հարադրություններ կազմվում են հիմնականում համանիշ, նույնանիշ, ինչպես նաև միևնույն իմաստաբանական դաշտին պատկանող և հականիշ բառերի հարադրությունից:

ա) Համանիշ, միևնույն իմաստաբանական դաշտին պատկանող, նույնանիշ և հականիշ բառերի հարադրությամբ հայերենում անվանական կապակցություններ են կազմվում, ինչպես՝ *ահ ու սարսափ, ծայն ու ծպտուն, թանկ ու կրակ, այր ու կին, տակն ու վրա* և այլն:

Պարսկերենում ևս այս կարգին պատկանող բառերն շատ ունակ են հարադրվելու և կազմելու անվանական հարադրություններ: Պարսկերենը շատ հարուստ է հատկապես հականիշ բառերով կազմված հարադրություններով: Օրինակ՝ نر و ماده (nar o madde) / խոսակցական՝ էգ ու ործ/, کم و زیاد (kam o ziâd) /քիչ թե շատ/, ابتدا و انتها (ebtedâ o entehâ) /սկիզբ ու վերջ/, خورد و تشنه (xiird o šîše) /բառացի՝ ջարդ ու ապակի=ջարդ ու փշուր/ և այլն:

բ) Եվ հայերենում, և՛ պարսկերենում հանդիպում են իմաստային որոշ ընդհանրություն ունեցող (միևնույն իմաստաբանական դաշտին պատկանող) բառերի հարադրությամբ կազմվող անվանական հարադրություններ, ինչպես՝ *թև ու թիկունք, հագած-կապած, արև-աշխարհ, տուն ու տեղ* , دست و پا (dast o pâ) /ոտն ու ձեռք/, گرد و خاک (gard o xâk) /հող ու փոշի, խոսակցական՝ թոգ ու փոշի/, برف و بار (bâd o barf) /բառացի՝ քամի ու ձյուն=ձնաբուր/ և այլն:

գ) Իմաստային տեսակետից իրար հաջորդող թվականների (միավորների ու տասնավորների) միացումներ, մեկ միավորի արժեքով, արտահայտում են մոտավորության իմաստ: Սրանք հարակցական են, ինչպես՝ *մեկ-երկու, չորս-հինգ, երեսուն-քառասուն* և այլն: Մոտավորության իմաստ արտահայտող այս կարգի թվականական հարադրություններ նույնպես կազմվում են պարսկերենում, որոնց մասին արդեն նշվեց վերևում:

Հայերենում ու պարսկերենում անվանական հարադրություններից կառող են կցական բարդություններ կազմվել: հարադրավոր կապակցությունները իբրև

մի բառական միավոր ծգտում են կցվելու և մեկ կցական բարդ բառ դառնալու : Պարսկերենում կցական բարդ կապակցություններ կազմվում են կամ հարադրությունների բաղադրիչների ուղղակի կցմամբ, կամ՝ նրանց միջև առկա՝ (օ) շաղկապի վերածումով՝ (ā-alef) /ա/ բառակազմիչ տարրի: Կան այնպիսի բառեր, որոնք կարող են գրվել և՛ որպես հարադրական, և՛ որպես կցական բարդություններ, ինչպես՝ հայերեն չափ ու ծն/չափումն, ներս ու դուրս/ներսուդուրս, կարգ ու սարք/կարգուսարք և այլն, պարսկերեն گشت و گز (gost o gū//gostogū) /զրույց, ասուլիս/, کمپیش/کم و بیش (kam o biš//kamābiš) /քիչ քե շատ/, جست و جوی (jost o jūlljostajū) /որոնում, փնտրտուք/ և այլն: Կան և այնպիսի բառեր, որ արդեն վերածվել են կցական բարդություն, ինչպես՝ հայերեն՝ այրուծի, առուծախ, հալումաշ և այլն, պարսկերեն زاناشویی (zanāšūi) /ամուսնություն/, تکیو (takāpū) /վազվզոց, փնտրտուք/ և այլն¹¹:

Ներկա հոդվածը նպատակ ունի ամփոփ ներկայացնելու ժամանակակից հայերենում ու պարսկերենում առկա անվանական հարադրությունների ընդհանրությունները: Հայերենն ու պարսկերենն ունեն միայն տվյալ լեզվին բնորոշ շատ ու շատ հատկանիշներ, սակայն կան նաև մի շարք այնպիսի առանձնահատկություններ, որոնք ըստ ձևակազմության եղենակի կամ արտահայտող իմաստի, նդհանուր են երկու լեզուներում, որոնց մասին բերված են հոդվածում: Անվանական հարադրությունները համեմատվող երկու լեզուներում բաժանվում են երեք ենթատեսակների՝ հայերենում՝ շաղկապական (դաշտ ու անտառ), հարակցական (ջահել-ջիվան) և կապակցական (ոտքից գլուխ), իսկ պարսկերենում՝ շաղկապական کوه و دره (kūh o darre) /սար ու ծոր/, շարահարական առանց նշույթی بالا پایین (bālā pāin) /Վերև-ներքև/ և հավելադրական سر تا پا (sar tā pā) /ոտքից գլուխ/: Նշվել է նաև յուրաքանչյուր տեսակի բաղադրիչների բառային իմաստաբանական հատկանիշները:

This article briefly presents the main types of nominal analytical compounds in Armenian and Persian. In this languages, many of such words are built in specific ways. However, there exist analytical forms common to both languages. In both compared languages nominal analytical compounds are divided into three groups: syndetic (e.g. դաշտ ու անտառ), asyndetic (e.g. ջահել-ջիվան), combinative (e.g. ոտքից գլուխ) in Armenian and syndetic (e.g. کوه و دره (kūh o darre)), paratactic (e.g. بالا پایین (bālā pāin)), adjunctive (e.g. سر تا پا (sar tā pā)) in Persian. The semantic features of components of analytical compounds are also touched upon in the article.

¹¹ Sb'u Gholām-Rezā Tajvidi. Op. cit., p. 29: